ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2020թվականի N 15-Ն

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2019թ. բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2019թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Համայնքի ղեկավար պարոն Ն. Հակոբյանին՝

ա) ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազանների ճշգրտման, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ:

բ) հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները: Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն ու թափանցիկություն:

գ) անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման ուղղությամբ: Ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը:

դ) բարձրացնել աշխատակազմի և բնակավայրերի վարչական ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2020թ. բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման պլանի կատարման, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ**